

ՍԿԻՉԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԻՆԵՐՈՒՄ
ՅԻՇԱՏԱԿ ԵՊԻԱ ՄԱՐԳԱՐԷԻՆ

18 ՄԱՅԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 3
Համբերութիւն	Էջ 4
Սերտողութիւն Մատթէոսի	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՐՐՈՐԴԻ ԳԻՐՔԷՆ

(18.29-46)

Կէսօրը անցաւ, եւ Բահաղի մարգարէները շարունակեցին իրենց ցնորական կանչուըռտուքը մինչեւ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը. բայց ո՛չ մէկ ձայն:

Այն ատեն Եղիա Թեսալացի ըսաւ գարշելի այդ կուռքերու մարգարէներուն.

- Հեռացէ՛ք այլեւս, հիմա ես իմ ողջակէզս պիտի մատուցանեմ:

Եւ անոնք հեռու գացին:

Եղիա ժողովուրդին դառնալով ըսաւ. «Ինծի՛ մօտեցէք»: Եւ ամբողջ ժողովուրդը անոր մօտեցաւ: Եղիա Տիրոջ կործանած սեղանը վերականգնելու համար տասներկու քարեր առաւ, Յակոբի որդիներէն սերած ցեղերուն թիւին համաձայն, որուն Աստուած խօսած էր ըսելով. “Իսրայէլ պիտի կոչուիս”, այդ քարերով սեղան մը կանգնեց Տիրոջ անունին, եւ անոր շուրջը փոս մը փորեց, թիթեղ մը սերմնցու տանելու խորութեամբ: Ապա փայտերը սեղանին վրայ շարեց, զուարակը կտոր-կտոր ընելով փայտերուն վրայ դիզեց եւ հրամայեց.

- Չորս սափոր ջուր բերէք եւ ողջակէզին ու փայտերուն վրայ թափեցէք:

Ապա ըսաւ. «Կրկնեցէ՛ք նոյնը»: Եւ անոնք նոյն ձեւով կրկնեցին: «Երրորդ անգամ ըլլալով կրկնեցէ՛ք նոյնը», ըսաւ ան, եւ երրորդ անգամ մըն ալ այնպէս ըրին: Զուրը սեղանին շուրջ հոսեցաւ եւ լեցուց փոսը:

Երբ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը հասաւ, Եղիա մարգարէ սեղանին մօտեցաւ եւ աղօթեց աղաղակելով.

- Ո՛վ Տէր, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը, ցո՛յց տուր այսօր թէ դո՛ւն ես Իսրայէլի Աստուածը եւ ես՝ քու ծառադ, եւ թէ քեզի համար ըրի այս բոլորը: Լսէ՛ ինծի, Տէ՛ր, պատասխանէ՛ ինծի կրակով, որպէսզի այս ժողովուրդը գիտնայ թէ դո՛ւն ես Աստուածը, ո՛վ Տէր, եւ դո՛ւն ես որ ետ քեզի կը դարձընես իրենց սիրտը:

Այն ատեն Տէրը երկինքէն կրակ զրկեց, որ այրեց ողջակէզն ու փայտերը, քարերն ու հողը, եւ լափեց փոսին մէջ, հաւաքուած ջուրը: Ասիկա տեսնելով՝ ամբողջ ժողովուրդը երեսի վրայ գետին ինկաւ, ըսելով. «Արդարեւ Տէ՛րն է Աստուածը, Տէ՛րն է Աստուածը»:

Եղիա անոնց հրամայեց. «Բռնեցէ՛ք Բահաղի մարգարէները. ոեւէ մէկը ողջ չմնայ»: Եւ ժողովուրդը բռնեց զանոնք: Եղիա զանոնք Կիսոն կոչուած հեղեղատը իջեցուց եւ հոն կտորեց զանոնք:

Այնուհետեւ Եղիա Աքաաբին ըսաւ. «Գնա՛ հիմա, կե՛ր եւ խմէ՛, որովհետեւ մօտալուտ սաստիկ անձրեւի ձայն կ'առնեմ»: Աքաաբ ուտելու եւ խմելու գնաց, իսկ Եղիան Կարմեղոս լերան գագաթը բարձրացաւ, մինչեւ գետին խոնարհեցաւ ու դէմքը ծունկերուն մէջ առաւ, եւ իր ծառային ըսաւ. «Գնա՛ եւ ծովուն կողմը նայէ»: Պատանին գնաց նայեցաւ եւ ըսաւ. «Բան չկայ»:

- Դարձեալ գնա՛, - ըսաւ Եղիա, եւ եօթն անգամ պատանին ետ գնաց: Եօթներորդ անգամին պատանին ըսաւ.

- Ահա մարդու մը ձեռքին չափ փոքրիկ ամպ մը կ'ելլէ ծովէն:

Այն ատեն Եղիա ըսաւ.

- Գնա՛ եւ Ագաաբին ըսէ՛. “Կառքդ լծէ՛ եւ տունդ դարձիր որպէսզի անձրեւի չբռնուիս”:

Շուտով երկինքը ամպերով մթնեցաւ. հով ելաւ եւ սաստիկ անձրեւ սկսաւ: Աքաաբ իր կառքը հեծաւ եւ Յեզրայէլ փութաց: Տիրոջ զօրութիւնը օգնեց Եղիայի, որ պարեգօտը մէջքին ամրացնելով վազեց եւ Աքաաբէն առաջ մտաւ Յեզրայէլ քաղաքի դռնէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԷՆ

(2.1-15)

Երբ հասաւ ժամանակը, որ Տէրը մրրիկով երկինք պիտի բարձրացնէր Եղիան, Եղիա եւ Եղիսէ Գաղզաղայէն մեկնեցան: Եղիա Եղիսէին ըսաւ.

- Հո՛ս մնա, Տէրը զիս Բեթէլ կը ղրկէ:

Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Բեթէլ եկան: Բեթէլ բնակող մարգարէները խումբով եկան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, այդ մասին մի՛ խօսիք, - պատասխանեց Եղիսէ:

Ապա Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ս մնա, Տէրը զիս Երիքով կը ղրկէ:

Եւ ան պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ Երիքով եկան: Երիքով բնակող մարգարէները խումբով մօտեցան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, մի՛ խօսիք այդ մասին, - պատասխանեց Եղիսէ:

Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ս մնա, Տէրը զիս Յորդանան կը ղրկէ:

Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ երկուքը միասին գացին: Մարգարէներու խումբէն յիսուն հոգի հետեւեցան անոնց մինչեւ Յորդանան գետ: Եղիա եւ Եղիսէ գետեզրին կանգ առին, իսկ միւսները կանգնեցան քիչ մը հեռու: Եղիա իր վերարկուն հանեց, ծալեց զայն եւ անով զարկաւ ջուրերուն: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան, եւ անոնք երկուքով անցան ցամաք տեղէն: Երբ անցան, Եղիա ըսաւ.

- Եղիսէ՛, քանի դեռ հետդ եմ՝ խնդրէ՛ ինչ որ կրնամ ընել քեզի համար:

- Խնդրե՛մ. մարգարէական հոգիէդ կրկին բաժին թող ժառանգեմ, - պատասխանեց Եղիսէ:

- Դժուար բան խնդրեցիր, - ըսաւ Եղիա, - բայց պիտի ստանաս զայն, եթէ տեսնես իմ երկինք բարձրացուիլս. այլպէս պիտի չստանաս:

Եւ մինչ խօսելով կ'երթային, ահա յանկարծ հրեղէն ձիերով կառք մը իրարմէ բաժնեց Եղիան ու Եղիսէն, եւ Եղիա մրրիկով երկինք բարձրացաւ: Եղիսէ տեսաւ եւ աղաղակեց. «Հա՛յր, հա՛յր, ահա Իսրայէլի կառքն ու հեծեալները»: Եւ

այլեւս չտեսաւ զայն: Ուստի քաշեց, պատռեց իր վերարկուն, զայն երկու կտորի վերածելով: Ապա վերցուց Եղիայի վերարկուն, որ իր վրայ ինկաւ, եւ դարձաւ Յորդանան գետին եզերքը: Առաւ Եղիայի վերարկուն եւ ջուրերուն զարկաւ, բայց անոնք չբաժնուեցան: Այն ատեն գոչեց. «Ո՛ւր ես, Տէ՛ր, Եղիայի Աստուածը», եւ դարձեալ ջուրերուն զարկաւ: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան եւ Եղիսէ անցաւ միւս կողմ: Երբ Երիքովի մարգարէները դիմացէն տեսան զինք, ըսին. «Եղիայի հոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ»: Գացին դիմաւորեցին զինք եւ մինչեւ գետին խոնարհեցան անոր առջեւ:

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

(5.16-20)

Ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: Եղիա մեզի նման կիրքերու ենթակայ մարդ էր. բայց երբ աղօթեց որ անձրեւ չգայ երեքուկէս տարի չանձրեւեց երկրի վրայ: Ապա դարձեալ աղօթեց եւ երկինքը անձրեւ տեղաց ու երկիրը իր բերքը տուաւ:

Եղբայրներս, երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի եւ ուրիշ մը յաջողի զայն վերադարձնել, գիտցէք թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հոգին մահուընէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(14.25-30)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
« Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրինք կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկինքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չզրկուեցաւ, այլ զրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը»:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Եւ ան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

ՄԿԻՉԲ
ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԻՆԵՐՈՒՆ
(ԾՌԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 17)

ԺԷ.
ՀՈՒՏԱԿԱՆ ԾԱՐԱԹԻՐ
ԵՒ
ՅԱՐՈՒԹԵԱՆ Ա. ԿՐԻՍԿԻՆ

ՆԻՒՔԵՐ.

Հոգեգալստեան Ծարաթը: Ծարաթապահիին
Մասին: Ս. Գրային Ընթերցումները: Ինչո՞ւ
Եղիա Մարգարէի միջատակը:

1.- Հնագոյն շրջանին Հայ եկեղեցին
Հոգեգալուստի տօնը Ձատիկին հետեւած 50-րդ
օրը կը կատարէր, եւ անոր յաջորդած շաբաթը
միայն իբր պահքի շրջան կ'անցընէր: Արդէն 12-րդ
դարէն սուրբին Հայ եկեղեցին Հոգեգալուստը կը
կատարէ թէ՛ տօնին բուն օրը, որ Կիրակի մըն է,
եւ թէ անոր յաջորդած շաբաթուայ ընթացքին:
Հոգեգալստեան եօթնեակին համար շարականներ
գրուած են: Եթէ անոնց հեղինակները նկատի
ունենանք, ապա այն ատեն տօնին շաբաթուայ մը
վրայ կատարումը կրնայ սկսած ըլլալ 7-րդ դարուն:
Առաջին շարականին («Առաքելոյ աղաւնոյ») հեղինակ
կը կարծուին Մովսէս Խորենացին կամ Յովհան Մանդակունին (երկուքն ալ 5-րդ
դարու դէմքեր): Հոգեգալստեան շարականներուն
ամբողջացումը Ներսէս Շնորհալիի (12-րդ
դար) գործն է: Հետաքրքրական է, թէ ուրկէ՞
եօթ շարականներուն մէջ տեսնուած է գրիչը
Անանիա Շիրակացիի (7-րդ դար): Հոգեգալստեան
տօնը բազում օրերու վրայ կատարելը լատին
աւանդութենէն կու գայ մեզի, եւ լատիններուն
մօտ ութօրեայ տօնախմբութեան առաջին
յիշատակումը 8-րդ դարէն է: Հայ եկեղեցին
լատիններուն հետ փոխարարութեան սկսաւ
11-րդ դարու երկրորդ կէսէն՝ ինչպէս որ
առաջին արշաւանքներուն ժամանակ: Հետեւաբար,
Հոգեգալստեան տօնին յաջորդած շարականներուն
մէջ Անանիա Շիրակացիի գրիչին ներկայութիւնը
ենթադրելով՝ ճիշդ չ'ըլլար կարծիքը, թէ Հայ
եկեղեցին տարբեր վայրերու մէջ 7-րդ դարուն
իսկ Հոգեգալուստը կը կատարէր թէ՛ միօրեայ
եւ թէ՛ բազմօրեայ հանդիսաւորութեամբ: Գուցէ
Անանիա Շիրակացի Հոգեգալուստի խորհուրդին
կապուած երգեր գրած էր, որոնք սակայն աւելի
ուշ՝ Ներսէս Շնորհալիի կողմէ դասաւորուեցան
Հոգեգալստեան եօթ շարականներու կտաւին
մէջ: Ամէն պարագայի, Ներսէս Շնորհալին է
բազմօրեայ տօնախմբութեան հեղինակը:

2.- Հոգեգալուստին հետեւած շաբաթը պահք ալ
է, որ երկու անուններով կը ճանչցուի՝ «Ամարան
պահք» եւ «Եղիական պահք»: Նախ՝ «Եղիական
պահք» անունը թող թիւրիմացութեան չտանի.
անիկա որեւէ կապ չունի Եղիա մարգարէին հետ.
«Եղիական պահք» անունը տրուած է՝ որովհետեւ
Հոգեգալստեան յաջորդ Կիրակին, որ սկիզբն է
յարութեան Կիրակիներուն, կը յիշատակէ Եղիա
մարգարէին երկինք փոխադրուելը: Եւ երկրորդ
«Ամարան պահք» անունը ցոյց կու տայ այս
շաբաթապահքին ամառուայ եղանակին կապուած
ըլլալը (աշնանամուտի պահքն է Վարագայ
Պահքը, ձմեռանամուտի պահքն է «Ս. Յակոբի
պահք» կոչուածը, իսկ գարնանամուտի պահքն է
Մեծ Պահքի երկրորդ շաբաթը):

3.- Յարութեան Կիրակիներէն առաջինին Ս.
Գրային ընթերցումներն են. Թագաւորներու Գ.
Գիրքէն՝ 18.29-46. Թագաւորներու Դ. Գիրքէն՝
2.1-15. Յակոբոս Առաքելի Նամակէն՝ 5.16-20.
Եւ Ղուկասի Աւետարանէն՝ 4.25-30:

Առաջին ընթերցումը: Հրաշապատումը կ'ըսէ,
թէ Կարմեղոս լերան վրայ հաւաքուած Բահադի
քուրմերը «ցնորական կանչուըւտուք»ներով
կ'աղօթէին մինչեւ երեկոյեան զոհը մատուցելու
ժամը, սպասելով որ Բահադ «կրակով պատասխան»
տար եւ զոհասեղանին վրայ գետեղուած
զուարակը ողջակիզէր, սակայն իրենց սպասումը
անպատասխան կը մնար: Եւ ահա Եղիա մարգարէ
կը պահանջէր, որ կռապաշտ մարգարէները
հեռանան: Նախ ան «Տիրոջ կործանած սեղանը»
կը վերականգնէ. որպէս խորհրդանշական արարք՝
Յակոբի ցեղերուն թիւով տասներկու քարեր
կ'առնէ եւ զոհասեղանը կը շինէ: Զոհի ընծային
երկնառաք կրակով ողջակիզումը այնպէս մը
դրուագուած է, որ ցոյց տայ Եղիա մարգարէի
աղօթքին զօրութիւնը, ու Աբրահամի, Իսահակի
եւ Յակոբի Աստուծո՞յն ճշմարիտ ըլլալը: Ապա
Բահադի քուրմերը կը կոտորուին: Եղիա մարգարէ
դարձեալ կ'աղօթէ եւ Իսրայէլի մեղքերուն
պատճառաւ սահմանուած երաշտը կը դադրի.
Աստուած անձրեւ կը դրկէ երկիր:

Երկրորդ ընթերցումը: Դրուագը կը նկարագրէ
Եղիայի «մըրիկով» երկինք բարձրանալը: Կը
ներկայացուի անոր աշակերտին՝ Եղիսէի խոր
կապուածութիւնը հանդէպ իր ուսուցչին եւ մեծ
հրացումը՝ անոր մարգարէական ոգիին վրայ:
Մարգարէն աշակերտին ցանկութեան վրայ՝
ունենալու թէ՛ մարգարէական շնորհք եւ թէ՛
ըլլալու իր յաջորդը, կ'ըսէ՝ «պիտի ստանաս զայն,
եթէ տեսնես իմ երկինք բարձրացուիլս, այլապէս
պիտի չստանաս»: «Հրեղէն ձիերով կառք մը»
Եղիան երկինք կը բարձրացնէ: Եղիսէ կը տեսնէ

իր ուսուցչին մրրկով երկինք բարձրանալը: Ահա
իր վրայ կ'իյնայ եղիայի վերաբերումն: Եւ եղիսէ
կ'ըլլայ եղիայի յաջորդը:

Երրորդ ընթերցումը: Յակոբոս առաքեալ
աղօթքը կը ներկայացնէ որպէս բժշկարար: Ըստ
իրեն՝ «արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս
կ'օգնէ»: Ան արդար աղօթողի տիպար ցոյց կու
տայ եղիա մարգարէն: Աղօթքը պէտք է ծառայէ
«ճշմարտութեան ուղի»ին վերադարձնելու
մեղաւորը կամ անոր հոգին մահուընէ փրկելու:

Չորրորդ ընթերցումը: Յիսուս եղիայի
եւ եղիսէի օրինակներով ըսել կ'ուզէ, որ
Աստուծոյ փրկութիւնը ընդունելու համար եթէ
ընտրուածները մերժեն իրենց մատուցուած
երկնային շնորհը, անիկա պարապի չերթար, այլ
կը ծառայէ չընտրուածներուն ընտրութեան եւ
փրկութեան:

Այս բոլոր ընթերցումներուն մէջ դէմք մը կայ,
որ եղիա մարգարէն է: Ան փրկարար աղօթքի
տիպարն է: Արդար աղօթքը զգայարանական
եւ ըմբռնելի իրականութիւնը ներքնապէս,
հետեւաբար՝ նաեւ արտաքինապէս փոխող
զօրութիւն է:

4.- Յարութեան Կիրակիներու սկզբնաւորու-
թեան եղիա մարգարէին վերաբերող այս ընթեր-
ցումները ուրիշ բան մըն ալ կ'ըսեն:

Նոր Կտակարանին մէջ տեսանելի է Մովսէս
մարգարէի եւ Յիսուսի միջեւ համեմատութիւնը:
Ոչ թէ միայն Քրիստոսի ուսուցումները լրումն
են Մովսիսական ուսուցումներուն, այլեւ
Քրիստոս ինք լրումն է Մովսէս մարգարէին: Հին
Կտակարանին մէջ եղիա ներկայացուած է որպէս
երկրորդ Մովսէս. եղիայի առաքելութեան մէջ
բազմաթիւ գիծեր կան՝ որոնք կը նմանին Մովսէսի
առաքելութեան: Արդ, նկատի ունենալով որ Նոր
Կտակարանը Մովսէս մարգարէն տեսած է իբր
նախատիպը Յիսուսի, ուստի՝ եղիան ալ կ'ըլլայ
այլ նախատիպ մը Յիսուսի: Մովսէս մարգարէի,
եղիա մարգարէի եւ Յիսուսի անանջատելի
կապը բացայայտօրէն ներկայացուած է
Այլակերպութեան գրուագին մէջ: Քրիստոս
լրումն է զոյգ մարգարէներուն:

Բայց ինչո՞ւ եղիա մարգարէի յիշատակը այս
օր կը կատարուի: Գլխաւորաբար՝ որովհետեւ
Եկեղեցւոյ աւանդութեան մէջ մարգարէին
«մրրկով» երկինք բարձրանալը տեսնուած է
որպէս նախօրինակ Քրիստոսի յարութեան:

Հովհ
ԳՔ

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

«... իսկ որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ»

Մտ 10.22:

Ով Տէր,
Կեանքս խճողող առօրեայ մանրուքները
Ամբողջութեամբ Քեզի կը յանձնեմ:

Վայրկեանիս Տէրը Դուն ես:
Այդ մանրուքներուն իսկ ընդմէջէն
Ինձի կը ներկայանաս...

Ու կը ժպտիս:
Կը ժպտիս փշրանքներուս...
Ու համբերութիւն կը ներչնչես:

Համբերութիւն՝
Որպէսզի սիրող աչքովդ ինքզինքս տեսնեմ,
Այնպէս ինչպէս Դուն կը տեսնես:

Համբերութիւն՝
Որպէսզի էութիւնս
Ամենապաշտպան գրկիդ յոյսով ողողուի:

Համբերութիւն՝
Որպէսզի ժամանակաւորին
Նաբուսիկ դիմակը պատուի
Ու լուսապայծառ հայեացքդ արեգակնանայ:

Համբերութիւն՝
Որպէսզի, շրջապատիս շարժումին մէջ՝
Լսեմ ու կանչիդ անսամ:

Համբերութիւն՝
Որպէսզի մեղքերս հալեցնող
Հրոյդ խայծը տանիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետեւելով օրինակիդ
Սիրող աչքովդ եղբօրս նայիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետեւելով օրինակիդ
Գուրգուրոտ ձեռքովդ եղբօրս հասնիմ:

Համբերութիւն՝
Որպէսզի հետեւելով օրինակիդ
Թշնամիիս ներեմ:

Համբերութիւն՝
Որպէսզի ըմբռնեմ թէ
Թշնամի՛դ է իսկական թշնամիս՝
Աղբիւրը չարին,
Եւ ոչ՝ մութին մէջ խարխափող եղբայրս:

Համբերութիւն՝
Որպէսզի եկեղեցւոյ պայծառութեան
Մասնակցութիւնս կատարեալ ըլլայ:

Համբերութիւն...

Մինչ փշրուածս կը վերականգնես,
Կը յարուցանես,
Կ'այլափոխես:

Համբերութիւն...:

ՍՈՒՆՈՒՄ



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քանի՞ աւետարաններ գրուեցան: Ծշգրիտ
թիւի մը մասին չենք կրնար խօսիլ: Ղուկասի
աւետարանին առաջին երկու համարները մեզի
կ'ըսեն, թէ աւետարանիչին օրով՝ արդէն իսկ
բազմաթիւ մարդիկ գրած էին Յիսուսի կեանքին
վերաբերող գրուագիւցները: Կը կարդանք. «Շատեր
ձեռնարկեցին պատմելու եւ դասաւորելու այն
բոլոր դէպքերը, որոնք մեր մէջ տեղի ունեցան
եւ որ մեզի աւանդեցին անոնք՝ որոնք սկիզբէն
իսկ անոնց ականատեսներ եւ Աստուծոյ խօսքին
քարոզիչ եղան» (Ղկ 1.1-2):

Բազմաթիւ աւետարաններ գրուած են, սակայն
Եկեղեցին բոլորը չընդունեց, որովհետեւ անոնց
մէջ չգտաւ հարազատ արտայայտութիւնը այն
աւանդութիւններուն, որոնք փոխանցուած էին
Քրիստոսի առաքելութեան ականատեսներուն եւ
Աստուծոյ խօսքին քարոզիչներուն կողմէ:

Եկեղեցին առաքելական աւանդութեան վրայ
սեւեռեց իր նայուածքը, որովհետեւ այդ աւան-
դութեան կողքին եղծուածները ծնան, որ սկսան
թափանցել Եկեղեցիէն ներս: Անոնց դիմաց
Եկեղեցին պէտք ունէր կանգնելու ապահով
գետնի մը վրայ: Այդ պատճառով ընդունեց
միայն այն՝ ինչ որ առաքելական աւանդութեան
համաձայն էր: Ու մերժեց այն միւսները՝ որոնք
այդպէս չէին:

Բայց ինչո՞ւ համար Եկեղեցին անհրաժեշտ
նկատեց ո՛չ թէ միայն մէկ հատիկ աւետարան
ճանչնալ, այլ որդեգրեց այն չորսը, որ մենք
ուսինք այսօր: Եթէ չորսին ալ վկայութիւնները
մօտաւորապէս նոյնն են, ապա ի՞նչ պէտքը կար
չորսին, մէկ հատը բաւարար չէ՞ր: Ինչո՞ւ համար
Եկեղեցին չորս աւետարանները ընդունեց եւ
չուզեց համադրուած մէկ աւետարան ունենալ:
Ասորիքի մէջ Տատիանոս անունով մէկը համադրեց
չորսը Բ. դարու կիսուն (այն համադրութիւնը
հայերէնի թարգմանուած ու պահուած է Եփրեմ
Խուրիի վերագրուելով):

Սակայն հարց մը կայ այստեղ: Չորս
աւետարաններէն իւրաքանչիւրը Յիսուսի
կեանքին կապուած դրուագները փոքր կամ զգալի
տարբերութեամբ մը կը ներկայացնէ, նոյնպէս՝
Յիսուսի խօսքերը: Եւ այս իրականութիւնը
դժուարութիւն կրնայ ստեղծել մեզի համար, բայց
միաժամանակ զօրացուցիչ տուեալ մըն է: Այսպէս
են մարդկային կեանքի բոլոր վկայութիւնները:
Երբ մենք չորս վկաներ կանչենք դատարան,
եւ նոյն դէպքին մասին ուզենք, որ իրենց
վկայութիւնը տան, անկարելի է երեւակայել, թէ
նոյն դէպքը ճիշդ նոյն ձեւով տեսած ըլլան կամ
դիտած ըլլան եւ ճիշդ նոյն ձեւով ներկայացնեն:
Իւրաքանչիւրը կը ներկայացնէ իրեն յատուկ
կերպով մը, իր անկիւնէն: Դատաւորին
համար դէպքի մը մասին վկայութիւններուն
տարբերութիւնները կ'օգնեն, որ ան դէպքին
իրականութիւնը առաւել ճանչնայ: Եկեղեցւոյ
հայրերը այս ճշմարտութիւնը գիտէին: Բայց չորս
աւետարաններու իրենց ընտրութեան մէջ՝ անոնք
հաստատօրէն հիմնուեցան Աստուածաշունչով
արտայայտուած Աստուծոյ կամքին վրայ:

Եզեկիէլի մարգարէութիւնը իր առաջին գլուխին
մէջ կը խօսի «չորս կենդանիի կերպարանք»ի

մասին: Մարգարէն գրած է, թէ «անոնք մարդու կերպարանք ունէին» կամ «չորսն ալ մարդու երես ունէին: Աջ կողմէն առիւծի երես, չորսն ալ ձախ կողմէն եզի երես ունէին, չորսն ալ արծիւի երես ունէին» (Տե՛ս Եզ 1.5-10-ը): Այս պատկերը խորհրդաւոր է: Մարգարէն նաեւ գրած է, թէ այս կենդանիները իրենց վրայ կը կրէին Աստուծոյ գահը եւ որուն վրայ նստած էր Աստուած (1.26-27): «Չորս կենդանիի կերպարանք»ին մենք կը հանդիպինք նաեւ Յովհաննէս առաքեալի գրի առած Յայտնութեան մէջ: Այնտեղ գրուած է. «Հոն՝ կեղորոնք, գահին շուրջը, չորս կողմէն կային չորս կենդանիներ՝ առջեւէն ու ետեւէն աչքերով լեցուն: Առաջին կենդանին առիւծի կը նմանէր, երկրորդը՝ եզի, երրորդ կենդանին դէմքը մարդու կը նմանէր եւ չորրորդ կենդանին թուշոյ արծիւի կը նմանէր» (Յյտ 4.6-7): Գահին վրայ բազմած կը նկարագրուի ան՝ «որ կ'ապրի յաւիտեանս յաւիտենից» կամ Գառնուկը, այսինքն՝ Քրիստոս: Արդ, իւրաքանչիւր կենդանին ցոյց կու տայ գահին վրայ բազմողին մէկ յատկանիշը. մարդու նմանող կենդանին՝ անոր մարդ ըլլալը, առիւծի նմանող կենդանին՝ անոր թագաւոր ըլլալը, եզի նմանող կենդանին՝ անոր ծառայ ըլլալը, եւ արծիւի նմանող կենդանին՝ անոր Աստուած ըլլալը:

Իսկ չորս աւետարաններէն իւրաքանչիւրը այն մարգարէութիւններուն իրականացումն է. անոնցմէ ամէն մէկը Քրիստոսի քառեակ յատկանիշներէն մէկը կ'արտայայտէ. այսպէս՝ Մատթէոսի աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ որպէս Աստուծոյ ծառան, որ Օրէնքը ամբողջապէս կը յարգէ եւ կը գործադրէ, այդ պատճառով անոր խորհրդանիշն է եզը: Մարկոսի աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ որպէս թագաւոր, այդ պատճառով անոր խորհրդանիշ տրուած է առիւծը: Ղուկասի աւետարանին մէջ Քրիստոսի համար յաճախ գործածուած անունն է Մարդու Որդի: Մարդու Որդին Աստուծոյ վախճանաբանական ծրագիրը իրականացնողն է եւ Աստուծոյ հաւատարիմներուն ազատարարը. այդ պատճառով Ղուկասի աւետարանին խորհրդանիշն է մարդագէմ հրեշտակ մը (հրեշտակները մարդոց փրկութեան օգնողներ են, Եբր 1.14): Յովհաննէսի աւետարանը զՔրիստոս կը ներկայացնէ իր աստուածութեան մէջ. այդ պատճառով անոր խորհրդանիշն է արծիւը:

II

Ամէն մէկ աւետարանիչ Յիսուս Քրիստոսի Աւետարանը գրած է ըստ իր հասցէի ոգիին:

Այսպէս.

Ա.- Մատթէոսի աւետարանին հասցէն յատկապէս հրեայ քրիստոնեաներն են: Անոնք եւս՝ իրենց Մովսիսական եղբայրներուն պէս՝ մեծ կարեւորութիւն կու տային Օրէնքին եւ մարգարէներուն: Ուստի, Մատթէոսի աւետարանին մէջ Յիսուս նկարագրուած է որպէս Օրէնքի անթերի եւ ամբողջական գործադրութեան ուսուցիչը, եւ իբր մարգարէական խոստումներուն կատարումը: Յիսուս ըսած է. «Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ» (Մտ 5.17-19): Այս յայտարարութիւնը մենք ուրիշ աւետարանի մէջ չենք գտներ: Այս աւետարանին մէջ է, որ մենք ամենէն աւելի կը գտնենք մէջբերումներ մարգարէներէն. աւետարանիչը ամէն անգամ կը նշէ. ասիկա եղաւ՝ որպէսզի կատարուի գրուածը: Կը բաւէ միայն կարգալ Յիսուսի ծննդեան վերաբերող պատմութիւնը, կամ իր մկրտութեան եւ գործունէութեան մասին հատուածները, եւ պիտի տեսնենք, թէ քանի անգամ կը դիմէ մարգարէական վկայութիւններուն՝ երբեմն ակնարկելով եւ երբեմն բառացի մէջբերելով: Նոյնը խաչելութեան եւ թաղման պարագային. ամէն քայլափոխից ցոյց կու տայ մարգարէութեանց կատարումը Յիսուսի կեանքին մէջ:

Աւետարանիչին միտքն է նաեւ՝ Յիսուսը ներկայացնել իբր իր ժողովուրդին սպասած Մեսիան: Աւետարանին սկզբնաւորութեան Յիսուս կը ներկայացուի որպէս Քրիստոս, այսինքն՝ Աստուծոյ Օծեալը, որ Աբրահամի Որդին է, որ Դաւիթի Որդին է: Յիսուսի ծագումը Աբրահամ Նահապետին կապելով՝ աւետարանիչը ուզած է ցոյց տալ, թէ Յիսուս իր ժողովուրդին հարազատ զաւակն է. իսկ Դաւիթ թագաւորին կապելով՝ ուզած է ցոյց տալ, թէ ան Դաւիթի շարաւիղէն սպասուած յաւիտենական թագաւորն է:

Բ.- Մարկոս աւետարանիչ սկիզբը Պօղոս առաքեալի գործակիցն էր: Յետոյ դարձաւ իր հօրեղբօր՝ Բառնաբասի գործակից: Աւելի ուշ իբր Պետրոս առաքեալի թարգման՝ անոր հետ Հռոմ

գտնուեցաւ: Արդ, հաւանական է, որ Մարկոս իր աւետարանը ուղղած է հռոմէացիներուն: Այդ պատճառով ալ՝ ան Յիսուսը կը ներկայացնէ իբր զօրաւոր թագաւոր: Հռոմէացիները Յիսուսէ առաջ եւ Յիսուսի ժամանակ, ինչպէս անկէ ետքն ալ՝ հսկայ կայսրութեան մը տէր էին: Անոնք գինուորական մարդիկ էին եւ ոյժին, զօրութեան ու տիրապետութեան կը հաւատային: Մարկոս աւետարանիչ ալ Յիսուսը ներկայացուցած է իբր տէր ոյժի եւ զօրութեան, այլեւ մէկը՝ որ կը տիրէ բնութեան եւ հոգեկան աշխարհին վրայ: Ամենէն աւելի հրաշքները կը գտնենք այս աւետարանին մէջ:

Նկատի ունենալով, որ հռոմէացիները նաեւ գործնապաշտ մարդիկ էին, Մարկոս աւետարանիչ Յիսուսը ներկայացուցած է աւելի գործելու վրայ՝ քան թէ խօսելու կամ խորհրդածելու: Յիսուս միշտ գործի մէջ է. կը շրջի, կը քարոզէ, կը բժշկէ, կը հրաշագործէ, մեղաւորին հետ կ'ըլլայ: Արդ, Մարկոս աւետարանիչ կը ներկայացնէ թագաւոր մը, որ իր ամբողջական իշխանութիւնը ի գործ կը դնէ եւ աստիճանաբար կը տարածէ գայն, այսինքն՝ նոր-նոր հետեւորդներ կը շահի:

Գ.- Դուկաս աւետարանիչ Անտիոքացի յոյն մըն էր եւ ընկերակից Պողոս առաքեալի, յատկապէս անոր Փոքր Ասիոյ մէջ ճամբորդութիւններու ընթացքին: Հաւանաբար աւետարանիչին հասցէն այն շրջանի յոյն համայնքներն էին: Յոյները գեղարուեստական շեշտուած ախորժակ ունէին, իսկ անոնց մտածողութիւնը մարդակեղրոն էր: Դուկաս աւետարանիչ յունական ոգիի այն երկու յատկանիշներուն գոհացում կու տայ: Այս աւետարանին մէջ է, որ մենք կը գտնենք օրինակ Չաքարիայի, Եղիսաբէթի եւ Մարիամ Աստուածամօր օրհներգութիւնները: Նաեւ աւետարանիչը Յիսուսը կը ներկայացնէ խորապէս մարդկային հետաքրքրութիւններով: Ան ընկերութեան վերնախաւին կողմէ անտեսուած խոնարհ դասակարգին հետն է. այսպէս՝ մեղաւորներուն, աղքատներուն, գրկեալներուն, մաքսաւորներուն: Դուկասի աւետարանը մարդոց հանդէպ թէ՛ Յիսուսի եւ թէ՛ Աստուծոյ սէրը շեշտող աւետարանն է: Նայեցէք պարզապէս այն տարրերուն՝ որոնք չենք գտներ միւս աւետարաններուն մէջ. Անառակ որդիին առակը, Բարիսամարացիին առակը, Չաքէոս մաքսապետին դարձի պատմութիւնը, խաչեալ աւագակին դարձը եւ արքայութեան արժանանալը: Մատթէոս աւետարանիչին պէս Դուկաս աւետարանիչ եւս Յիսուսի ազգաբանութիւն մը կը ներկայացնէ: Մատթէոս աւետարանիչ Յիսուսի ծագումը

կը կապէ Դաւիթ թագաւորին եւ Աբրահամ Նահապետին, իսկ Դուկաս աւետարանիչ՝ Ադամի: Ինչո՞ւ: Եբրայեցի ժողովուրդը իրեն Նահապետ կ'ընդունէր Աբրահամը: Մինչդեռ Ադամէն սեռած են նաեւ ուրիշ ազգեր: Յստակօրէն Դուկաս աւետարանիչ կ'ուզէ Յիսուսի համամարդկային արժէքը ցոյց տալ:

Դ.- Յովհաննէս առաքեալ Յիսուսի տասներկու աշակերտներէն մէկն էր. ան տարիքով ամենափոքրն էր: Աւետարանիչին հասցէն անմիջականօրէն Եփեսոսի Քրիստոնէաներն էին, հաւանաբար: Այլ խօսքով՝ աւետարանիչը հելլենական մշակոյթով հաւատացեալներու ուղղած էր իր գիրքը: Յովհաննէսի աւետարանը շատ յստակօրէն կը տարբերի համատեսական աւետարաններէն: Մինչ համատեսականները Յիսուսի գործունէութիւնը գլխաւորաբար Գալիլիոյ մէջ կատարուած ներկայացուցած են, չորրորդ աւետարանը զարմանալիօրէն, կարծէք բաց մը գոցելու պէս, Յիսուսի գործունէութիւնը առհասարակ կը ներկայացնէ Երուսաղէմի շրջակայքին մէջ, այսինքն՝ Հրէաստանի: Տոկոսային համեմատութեամբ երբ նայինք, համատեսականները Յիսուսի գործունէութիւնը 90 առ հարիւրով ներկայացուցած են Գալիլիոյ մէջ, իսկ չորրորդ աւետարանը գայն ներկայացուցած է ճիշդ հակառակ համեմատութեամբ: Համատեսականներուն մօտ աւելի ներկայացուած են Յիսուսի գործերը քան խօսքերը (թէպէտ Մատթէոսի քով խօսքի բաժինն ալ բաւական լայն է, սակայն ոչ Յովհաննէսի չափով): Յովհաննէսի աւետարանին մէջ Յիսուսի գործերը կամ հրաշքները չենք տեսներ այնքան՝ որքան մտածողութիւնը, եւ այն ալ մտածողութեան խորունկ մէկ եզրը, որ մենք կը կոչենք խորհրդածութիւն: Չորրորդ աւետարանին մէջ Յիսուս իր միտքերը կը խորացնէ, երկարօրէն կանգ կ'առնէ անոնց վրայ:

Յովհաննէս առաքեալ իր աւետարանի սկիզբէն մինչեւ վերջը առաջադրութիւնը ունեցած է Յիսուսի աստուածային ինքնութիւնը ցոյց տալ. Յիսուս Աստուած Բանն է:

Առաքեալին մէջըբերած Յիսուսի խորհրդածութիւնները մեզ յաճախ կը հրաւիրեն ճանչնալու Աստուծոյ Որդին. Յիսուս ամէն անգամ կը յիշեցնէ իր երկինքէն իջած ըլլալը, Հօրմէն առաքուած եւ միաժամանակ Անոր հետ ըլլալը:

(Շարունակելի 2)

**ՅԱԶՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՂՅ**

Երկուշաբթի, 19 Մայիս 2008

Sosն Հռիփսիմեանց Կոյսերու

Երեքշաբթի, 20 Մայիս 2008

Sosն Գայիանեանց Կոյսերու

10.00 > Ս. Գրային սերտողութիւն՝

Ս. ՅԱԿՈԲ Զոյրերու ժողով

Յինգշաբթի, 22 Մայիս 2008

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 24 Մայիս 2008

Sosն Ս. Գր. Լուսաւորչի Ելն ի Վիրապէն

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Հայ երիտասարդներուն համար

Կիրակի, 25 Մայիս 2008

Sosն Ս. Էջմիածնի

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

**ՅԱՏՈՒԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝**

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

ԱՄԵՆ ՇԱՔԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԺԱՄԸ 6:30

ՀԻՔԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

S. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:

ՍՈՂԱ ԹԵՐԹԻԿԸ Ե-ՆԱՄԱԿՈՎ ԱՏԱՆԱՂՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՅԻՄԸ ՈՒՊՈՂԱՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ

**ԱՐՏԱՂԱՅՏՈՒԵՅԷՔ
eglise58@sourphagop.com**

**ՀԱՄԱՂԱՔԻՍ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ
ՔԱՅ Է**

**ԵՐԿՈՒԵԱՔԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ
ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00**

**ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԿԻ ԲԱՐՏՈՒՊԱՐԻՆ՝
514 331 5445 x202**

ԿԱՄ ՀՈՎԻՐԻՆ՝

514 331 5445 x203

**ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԲԵԼԻ Ե-ՀԱՅԻՄԸ՝
eglise58@sourphagop.com**

**Ս. ՅԱԿՈԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅ
29ՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆ
2008-2009**

(3-16 տարեկան փոքրերու համար)

**ԱՄԵՆ ԿԻՐԱԿԻ
ԺԱՄԸ 10:30**

Մանրամասնութեանց համար դիմել
Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին
514 956 1277 կամ
director@sourphagop.org

կայքէջ՝
www.sourphagop.org

«Մաշտոցի Արձագանգ»
www.sourphagop.org/mashdots